

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

« 06 » փետրվար 2023 թ No 549 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ  
ՀԵՏԳՐԱՆՅՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 19-րդ հավելվածի և IX բաժնի 153-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 04/347-23 առ 02.02.2023թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ընդունել ԵԱՏՄ ընթացակարգով գրանցված 2 դեղի հետգրանցումային փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա.Բաղդյանին՝

1) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, լիազոր մարմնի հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

 Invalid signature

X 

---

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

**Գրանցման հավաստագրի վերաձևակերպում չպահանջող**

**ԵԱՏՄ ընթացակարգով գրանցված դեղերի հետգրանցումային փոփոխությունների ցանկ**

Ի	Փոփոխության տեսակ	Առևտրային անվանումը	Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը	Դեղաձևը	Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը	Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր)	Երկիր	Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր)	Երկիր	Բաց թողման կարգավիճակը	Եզրակացության համար և ամսաթիվ
1.	IA	ԱՐԻՖՈՆ Ռետարդ	ինդապամիդ	դեղահատեր երկարատև ձեռքազատմամբ թաղանթապատ	1,5մգ; (30/1x30/) բլիստերում, (90/3x30/) բլիստերում	ՍԵՐՎԻԵ ՌՈՒՍ ՍՊԸ, 108828, թաղ.158, շ 2, շ 1,բն. տ. Կրասնոպոլսկոյե, Մոսկվա	Ռուսաստան	Լես Լաբորատորիես Սերվիե, 50, Կարնո փ., 92284 Մուրեն սեղեքս	Ֆրանսիա	Դ	000156 02.02.2023
2.	IA	Զոլաքսա ՕՂՏ	օլանգապին	դեղահատեր բերանի խոռչում լուծվող	10մգ; (28/2x14/) բլիստերում, (30/5x6/) բլիստերում, (56/4x14/) բլիստերում	Պոլֆարմա դեղագործական գործարան Ս.Ա.,Պելլալինսկա 19 փ., 83-200 Ստարոգարդ Գդանսկի	Լեհաստան	Պոլֆարմա դեղագործական գործարան Ս.Ա.,Պելլալինսկա 19 փ., 83-200 Ստարոգարդ Գդանսկի	Լեհաստան	Դ	000239 02.02.2023